ՁԼԱՍ, ԸՆԴՈՒՆԱԿ կրթութեան և կա-տուի պէս խաղասէր. ձայնն արՁի ձայ-նին կը մնտենայ. և թէ որ փայփայուի, կատուի փայփայանաց ատեն հանած ձայնին նման ձայներ կը հանէ։ ԱրՁի-կատուին ձագը կծիկի մը պէս փախու-թեալ կը ծնանի, գլուխն ադիովը ծած-կեալ։

ՕԳՏԱԿԱՐՈՒԹԻՒՆՔ ԿԵՆԴԱՆԵԱՑ

Փոխանակ կենդանեաց բարձրագոյն վախճան ու նպատակ ընծայելու և գոգ-ցես մարդոյ հաւասարելու, ինչպէս կ'ըսէ այժմեան չնչահաւատութիւնը, շատ աւելի բանաւոր կը թուի ըսելն որ կենդանիք տնկոյ պէս մարդկան ծառայելու և եր-կրագործաց զարդարելու համար ստեղ-ծուած են։

Տնկոյ նկատմամբ մեր ըսածն սովնա-յայտի է, ուստի աւելորդ կը համարիմ երկայնաբանել հոս. բնական է հարցը-նել, միայն անապատն ուղևորող ճանա-պարհորդին թէ ինչպէս կը տարնապահն զսիրտ նորա անձկութեամբ և երկիւղիւ այն մեռելատիպ երաշտայեալ միայնու-թիւնը, զորս ստիպեալ է հատանել ա-ռանց դադրի կանաչութեան կամ կաթիլ մը ջրոյ հանդիպելու. որ եթէ դիպուածով փո-քրիկ ոլասիսի մը պատահելու ըլլայ, կ'ոզ-ջունէ զայն իբրև երկարժամանակեայ բա-ցակայ բարեկամ, և վախճան կը համարի զայն իր անտանելի նեղութեանցը։ Բոլոր բուսական աշխարհը կամ թագաւորու-թիւնը մեծամեծ ծառայութիւններ կրնայ մատուցանել մարդկան, և կան մէկ քանի բոյսեր որ նոյն իսկ ինքն յինքեան հարատե-թեան ազբիւր են։ Մեքսիկական հնդիպարգե-հին (agave) օրինակի համար, օգտակար է իր ամեն մասամբը. արմատէն ջուան կը շինուի, բունէն՝ ատաղձ, փուչէն՝ գամ և ասեղ։

Այս տունկին տերևին մէջ տեղը փոսը-բակ մը կը ձևանայ, ուր կը լեցուի ամեն օր քաղցրահամ ու պայծառագոյն հեղանիթ մը, և գրեթէ տարուոյ չափ անդադար կը նորոգուի։ Թանձրացնելով այս հեղանիթ-թը՝ կը փոխակերպի 'ի շաքար, որ եթէ խառնուի ընդ ջրոյ, յետ չորեքօրեայ կամ հինգօրեայ խմորման՝ կծու համ կ'առ-նու. որոյ վրայ եթէ յաւելուս նարՁի և կամ վիմնի կեհագ, արբեցուցիչ զօրու-թիւն կը ստանայ։ Երկրագնոցս ամեն կողմը ատատուածային նախախնամ տեսչու-թենէ պատրաստեալ իրեն յատուկ առա-ձին տունկերն ունի, բնակողաց պէտքին ու կարօտութեան յարմար. իսկ այն բանն որ ամենուն անհրաժեշտ կարևոր է, ամեն կողմ գրեթէ կը գտնուի, ինչպէս է արմ-տիքը, որ կը բուսնի սկսեալ 'ի բևեռաց մինչև ցհասարակածն, վասն զի ժողովրը-դոց ապրանաց գլխաւոր հիմն է։

Բայց դառնալով մեր առաջարկեալ նիւ-թոյն, կ'ըսեմք որ կենդանեայ մարդկան մատուցած ծառայութիւնքն և օգտակա-րութիւնքը բազմատեսակ են, և թէ որ ուղեսայինք զամենն ալ յիշատակել հոս, խօսքերնիս շատ կ'երկարէր, և թերևս չէինք մ'ալ կրնար կատարելապէս մեր նպա-տակին հասնիլ, ինչու որ շատ կենդանիք որ 'ի սկզբան անօգուտ կը համարուէին, ըստ բարգաւաճելոյ արուեստից և գիտութեանց մեծ յարգ ստացան և պիտի ստանան։ Ուս-տի գլխաւորներն ու յայտնիները միայն նշանակենք հոս, որք մեծապէս նպաստա-մատոյց եղան աշխարհիս քաղաքակրթու-թեան ու յառաջդիմութեան գործոյն, ինչ-պէս են եզը, ձին, ուղտը, սրամար եղջե-րուն, լաման, ջուանն, և այլք։

Եզը երկրագործութեան միակ նեցուկն է. օրէնի անդաստանք անտէր պիտի մնային եթէ մարդ չունենար իրեն օգնա-կան այս համբերող ու անխոնջ աշխատա-ւորը։ Եզը, կ'ըսէ Պիւֆֆոն, ձիու, իշու և ուղտի պէս յարմար չէ կրել բեռնիս. թի-կանց ու մարմնոյն ձևը արդէն կը ցու-ցընեն զայն. բայց պարանոցին թանձրու-թիւնն և ուսոցը լայնութիւնն յարմարաւոր ըրած են զնա 'ի լուծ։ Կարծես թէ մաս-նաւոր արօրի համար ստեղծուած է. մար-մնոյն մեծութիւնն և դանդաղաշարժու-թիւնը, սրունից չափաւոր բարձրութիւնը, նոյն իսկ համբերատար ժուժկալութիւնն յաչխատանս, դաշտերը մշակելու և հողոյ զօրաւոր ու նորանոր արդելից յաղթելու համար ստեղծուած կը ցուցընեն զնա։ Զին թէպէտ և եզին հաւասար զօրաւոր է մարմնով, բայց յարմար չէ այգապիսի աշ-խատանաց. նախ որ սրունքը սատակի բար-ձրը են, չարժմունքն արագ և բուռն, և համ-բերութիւնը սակաւ, վասն որոյ և պատ-բաստ ապստամբելու իր առաջնորդին դէմ։

Եզը շատ տարիներ աշխատելէն ու ծե-բանալէն ետքն ալ, կը մատակարարէ մարդ-ոյ իր մսովն առողջարար ու սննդագործ կիրակուր մը, և ճարտարութեան արուես-

digitised by A.R.A.R.@

տից զանազան օգտակար նիւթեր։ Եղջիւրն եթէ հալեցնեմք, ըստ զանազանութեան կաղապարաց զանազան ձև կ՝առնու։ Ճարպը մոմեղինի կը ծառայէ, և կոչին խաղախորդութեան։ Ոսկրը գործօք բանելով՝ կը փոխուի ի բազմատեսակ և զանազան առարկայս։ Բուրդը կը ծառայէ իբրև խուզածք պատուռագործաց ու թամբագործաց. իսկ արիւնն առ՝ի մաքրել ու զտել գաւաթս։ Բայց կովը բաց յաչխատանաց և ի մսոյ՝ կը մատակարարէ նաև կաթ՝ անդադար ամենեցուն, ուսկից կը շինուի՝ պանիր և կոգի։

Ձին (դարձեալ Պիւֆֆոն է որ կը խօսի) եզական կենդանի մ՝է, որուն մարմնոյն ամէն մասանցը վրայ չափակցեալ համեմատութիւն կը տեսնուի. զոր եթէ բաղդատեմք ուրիշ կենդանեաց հետ, կը գտնեմք որ էշն տգեղ է մարմնով, առիւծը մեծ գլուխ մ՝ունի, եղին սրունքը սաստիկ նուրբ ու կարճ է և անհամեմատ մարմնոյն, և ուղղը տձև է. իսկ ուրիշ մարմնով զօրաւոր կենդանիք, ինչպէս ռնգեղջիւրը, փիղն և ձիագետին ուրիշ բան չեն բայց եթէ մեծազանգուած անձև կենդանիներ։ Զորքոտանեաց մէջ ծամելեայ աւելի կամ նուազ երկայնութիւնն իրենց աւելի կամ նուազ ապրուստեան նչան համարուած է. բայց ընդհակառակն ձիոյ ծամելիքը թէպէտ և սաստիկ երկայն է, բայց ոչ իշուն պէս ծանծաղամիտ է, և ոչ եզան նման ապուշ։ Գլխուն կանոնաւոր չափակցութիւնն ու պարանոցին և ուսոցը գեղեցկութիւնը վսեմական երևոյթ մը կու տան իրեն։ Աչքերը բոցափայլ և ականջները գեղեցիկ ու համեմատական մեծութեամբ շինուած են. ոչ ցլու ականջին պէս կարճ և ոչ իշու ականջին պէս չափազանց երկայն։ Բաչքն որ վայելչաձև կ՝ինջնան գլխուն վրայէն, կը զարդարեն պարանոցը, և ուժոյ ու կորովութեան երևոյթ մը կու տան. իսկ առախեալ և թանձր սուրը ծածկելով մարմնոյն վերջին մասը՝ կ՝աւարտէ զայն վայելչութեամբ։

Ձին՝ աղնուական ոգեկից մարդոյ, շատ տեսակ ծառայութեանց կու գայ, ինչպէս երկրագործութեան, ուղևորութեան, որսորդութեան և պատերազմի, ուսկից մասնաւոր ախորժ կ՝իմանայ։ Խառնաձայն աղաղակք և կոտորածք պատերազմի ամենևին չեն վախցներ զինքը, մանաւանդ թէ աւելի ևս կը վառեն ու կը բորբքեն։ Բայց որ զարմանալին է, իր պատուոյն մեծապէս վրէժխնդիր ալ է. և իր այս յատկութիւնը միայնակ արագաշարժութեան հետ, նախանձելի ու սիրելի կ՝ընեն զինքը զինուորական մարդոյ։ Բայց ով չի զարմանար ի տեսանելն որ իր այս եռանդուն ախորժութիւնն հանդերձ հեղ ու դիւրահաւան է տալ զպարանոց իւր ի լուծ կառաց և բեռանց, հնազանդելով սանձակալին ամեն ակնարկութեանցը։

Ուղղը կարծես անոր համար ստեղծուած է յԱստուծոյ՝ որպէս զի անապատք անմասուոյց չի մնան։ Արաբային երկնից պարգև կը համարի զայն, առանց որոյ օգնականութեան ոչ կրնար ապրիլ, ոչ առուտուր ընել և ոչ երթևեկել. որուն սովորական կերակուրն ուղղի կաթն է, միսը չատ ախորժահամ է իր քմացը։ Իսկ բուրդը որ կակուղ է և ամեն տարի կը փոխուի, կը ծառայեցնէ իրեն հիւսուածոյ զգեստներ շինելու։ Արաբացի ընտանիք մ՝իր ուղտովն երջանիկ է, և ոչ միայն բանի մը չի կարօտիր, այլ և ոչ քանէ մը կը վախէ։ Եւ յիրաւի ձիոյ հաւասար զօրաւոր է ուղղը, և ի պահանջել հարկին գրեթէ 1200 քիլոմեթր տեղ կը կտրէ միտչուն, ժամ մը միայն հանգչելով յաւուր, և կերածը քիչ մը չորցած խոտ և սոյն առանց ջրոյ։ Այս յատկութիւնն որ չատ յարգի է յանապատի, յառաջ գայ փորուն մէջ մէկ քանի ամենամեծ գեղձեր (glandule) ունենալէն, ուր կը պահէ անապական առաջուց առատութեամբ խմած ջուրը։ Երբ կենդանին կը տանջի ի ծարաւոյ, և պէտք կ՝իմանայ կլլած կերակուրը մանրելու և որոճալով կակղելու, ջրաց պարզ կրծկմամբ ի վեր կը հանէ փորին մէջ պահած ջուրէն քանակ մը և անով կը հալէ կերածը։ Բոլոր Ասիրկէի ու Ասիոյ մեծագոյն մասին վաճառականութիւնն այս հեզահամբոյր կենդանւոյն վրայ կը կայանայ, զան զի կրնայ տանիլ թիկանցը վրայ 300էն մինչև 600 քիլոկրամ բեռ։ Ուղղը նաև ահապտի կոչուած է ի բանաստեղծից, իբրև հատանող անցանող գոնսուհան ովկիան աւազուց, որոց մէջ թէպէտ սի խրին ոտքերը, բայց ապահովութիւն ու հաստատութիւն մ՝է իր քայլիցը։

Ինչ որ է ուղտն Արաբացւոց՝ նոյն է սրավար եղջերուն Լարոնացւոց համար։ Սառուցեալ կլիմայի մը տակ, ուր արեգակն ճառագայթներն առ՝ի չեղ միայն կը ծագին, ուր գիշերն երկայնին ամսօրեայ ժամանակ և ձիւնը կը ծածկէ զերկիր սկսեալ աշնան սկիզբէն մինչև գարնան վերջը, ուր տեղի ամառնային կանաչութիւնը մորենին է միայն, գիշին ու մամուռը, կրնար արդեօք Լարոնացին ապրել խաչամբք։ Բայց սրավար եղջերուն զոր գրեր է Աստուած այս կողմերս, կը մատա-

digitised by A.R.A.R.@

կարարէ բնակչաց զայն ամենայն որոց կը կարօտին։ Կը ձգէ զսայլ կամ զբալիբր, և կը քալէ ձիէն աւելի մուսպրութեամբ ու թեթևութեամբ։ Կարող է օրը 120 քիլոմեդր տեղ քալելու դիւրութեամբ, և այնպիսի ճարտարութեամբ կը սահի ձեան վրայ, որպէս թէ ըլլար հողոյ կամ խոտոյ վրայ։ Մինչև ամենքնտիր է ուտելու համար. բուրդէն գերազանց մուշտակ կը շինուի, որուն մորթն ալ ամենափափուկ և տեւական է։ Իսկ կաթը կովու կաթէն աւելի սննդական է. եղջիւրքն 'ի բաղում ստեղումս կը բաժնուին, և ամեն տարի կ'իյնան ու կը նորոգուին։

Նոյն իսկ և 'ի հարաւային Ամերիկա, ինչպէս 'ի Փիլի ու 'ի Բերու, կայ ափրիկեան ուղտին նման կենդանի մը, բայց աւելի պզտիկ, որ մեծամեծ ծառայութիւններ կ'ընէ տեղացւոց։ Լաման որ գրեթէ չորս ոտք բարձրութիւն ու վեց երկայնութիւն ունի, բեռ կը կրէ, և կու տայ ուրիշ կենդանեաց պէս կաթ, միս և ամենաբարակ բուրդ ու կաշի. ուստի կը ճշմարտի մեր ըսածը թէ չի կայ երկիր որ չունենայ հարիւրող ու աչխատասէր կենդանի մը, որ ձեռն տայ մարդոյ և ընծայէ ինքն զինքն յօգուտ նորա։

Շունը կրնայ գերազանց ու զգալի օրինակ համարուիլ այն փոփոխութեանց որոց ենթակայ են կենդանիք եթէ ընտանենան մարդոյ։ Շունն իր վայրենի վիճակին մէջ հաւասար ուրիշ մնակեր կենդանեայ՝ վայրագ ու արիւնախանձ է. բայց երբոր թագոր կը թողու իր այս բնութիւնն և կը հեզանայ առաւել քան զայլ ամենայն կենդանիս։ Թէպէտ որկրամոլ է, բայց երկար ժամանակ կրնայ դիմանալ անօթութեան, և գոհ կ'ըլլայ ո և է տեսակ ուտելեաց։ Պատմքան որ ունի մարսողական մեծ զօրութիւն, կը մարսէ ամենապիղծ ոսկրն անգամ։ Շունն արագընթաց է, և կրնայ հատանել առանց յոգնելու բաւական երկայնութիւնս ճանապարհի։ Կաւոյն ծակտիքը սաստիկ ամիսփեալ ըլլալուն՝ երբեք չի քրտնիր, նոյն իսկ ամառնային ամենասաստիկ ջերմութեամբ. և եթէ չատ տաքնայ՝ լեզուն գուրս կը հանէ և չարուն՝ նակ կը հեւայ, և կամ ինք զինքը ջուր կը ձգէ զովանալու համար։

Շանը հոտառութեան զգայարանը մեծ ուժ ունի, որուն չի կրնար հաւասարիլ ուրիշ ո և է կենդանի։ Այս գեղեցիկ յատկութիւններէն զատ, արթուն պահապան է տանց, անվեռս բարեկամ տղայոց, առաջնորդ կուրաց, պաշտպան խաչանց և սրամիտ օգնական որսորդաց, որոց ամենքն յարգի ու եղական յատկութիւններ են։ Բայց հօս գարձեալ տեղի տամք Պլիփոնի, որ ինքը խօսի այս կենդանւոյն վրայ։

Շունը, կ'ըսէ Պլիփոն, 'ի բաց առեալ մարմնոյն վայելչաձև գեղեցկութիւնն, եռանդուն բարքն, ոյժն և արագաշարժութիւնը, ունի 'ի ծայրագոյն աստիճանի այնպիսի ներքին բարեմասնութիւններ՝ որ զմարդ առ ինքն կը ձգէ ու կը սիրցնէ։ Ըստ ինքեան կրկնատ ու վառվռուն՝ միանգամայն վայրագ ու արիւնասէր բնաւորութիւն մը՝ զշունը քան զուրիշ ամեն կենդանի անմերձենալի պիտի ըներ, բայց կը տեսնենք որ կրթութիւնն այս ամեն բաներս 'ի բաց ձգել տուած է չան։ Ինք զինքը բոլորովին իր տիրոջը նուիրած է. և անոր առջին դրած է իր քաջասրտութիւնն ու հանճարը. կ'ըսպասէ անոր հրամանացն առ 'ի կատարել. կը խորհրդակցի անոր հետ, կը հարցնէ և կ'աղաչէ։ Փոքրիկ ակնարկութիւն մը բաւական է, կ'իմանայ մէկէն իր տիրոջը կամքը։ Թէպէտ չունի մարդոյնման լոյս մտաց, սակայն ունի զօրաւոր զգացողութիւն, և ասկէց աւելի հաւատարմութիւն և հաստատութիւն 'ի սէր. անփառասէր, անինքնասէր, անվրէժխնդիր և սիրելիաց. բոլորովին եռանդն, բոլորովին կրակ, բոլորովին հնազանդութիւն։ Աւելի զգայուն է 'ի յուշ բարեգործութեան քան չարագործութեան. չի կատղիր ընդդէմ արհամարհանաց, ներողամիտ կ'ըլլայ և կը մոռանայ։ Փոխանակ բարկանալու և ապստամբելու, նորանոր փորձից 'ի ներքոյ կը դնէ զինքը. կը լզէ զդրծին ցաւոց, այսինքն այն ձեռքը՝ որ եհար. հեծեծանք միայն ընդդէմ դառնայ, և զենընկէց առնէ զտէրն իր համբերութեամբ մանաւանդ և հպատակութեամբ քան ստամբակութեամբ։

Բոլոր աչխարհ լի է այս զարմանալի կենդանւոյն հետաքրքրական պատմութիւններովը. և ամեն օրն որ կ'անցնի՝ կը նշանակէ 'ի միտս ամենեցուն նշանաւոր դէպք մը չան յատկութեանց վրայ։ Աստուցմէ մին որ վերջերս պատահեցաւ 'ի Բարիզ արժանի կը համարիմք յիշատակութեան։

Գործաւոր ազգատ ընտանիք մը չուն մ'ունէր, որուն հետ կը բաժնէր իր ամեն օրեայ քրտամբ վաստակած հացը. բայց ինչպէս եղաւ որ աչխատութեան պակասութեան պատճառաւ և կամ յայլոց ազէտից՝ ստիպուեցաւ խնայութիւն ընել և ծախքը վաստակածին հետ 'ի համեմատութեան դնել։ Շունն որ մեծ էր և զօրաւոր ախորժակ ու ստամոքս մ'ունէր, ընտանեաց խեղճութեան հետևանքն զգացողն նախ ինքն եղաւ։ Քիչ մը ժամանակ ալ գտաւ

digitised by A.R.A.R.@

իր կերակուրը նոյն տունէն. բայց տան. ուտէրն վերջապէս 'ի հարկէն բռնագա. տեալ, մտածեց արտաքսել այդ տաղտկալի հիւրը։ Փորձեց նախ ընծայ տալ, բայց ընդունող մը չգտնուելուն, հարկեցաւ սպանութեան խորհրդոյն ձեռք զարնել։

Սէն գետը մօտ էր. ուստի լաւ և դիւրին համարեցաւ խեղդմամբ սպանութիւնը։ Այն առաւօտն որ չանը կենացը վերջինը պիտի ըլլար, սովորականէն աւելի սէր ու գութ ցուցուցաւ խեղճ կենդանւոյն վրայ. անանկ որ բաժանումն առանց արտասուաց անհնարին եղաւ։ Ամենէն աւելի տանտիրոջ սիրտը ելած էր, որուն կ'ինար գահ. ճութեան պաշտօնը։ Գետափը նաւակ մը գտնելով, մտաւ և յառաջեց դէպ 'ի գետին մէջ տեղը, ուր ջուրն խորունկ էր, և տեղին հեռի յատանց։ Դժբախտ կենդանւոյն պարանոցէն կախուած ծանրակշիռ քարն, պիտի իջեցնէր զինքը մինչև 'ի խորս գետոյն։ Հասեալ 'ի միջավայր տեղին, 'ի վեր առաւ ծանրոցը լի երկիւղիւ և դողմամբ. և բոլոր անձամբը յենլով նաւակին եզերացը վրայ՝ դէպ 'ի դուրս կարկառեցաւ և Թողուց ծանրոցը ջրոյն մէջ։ Բայց քարին ծանրութիւնն և կամ երկնից պատուհասն՝ որ վրէժխնդիր է նոյն իսկ կենդանեաց դէմ՝ եղած անիրաւ անգթութեան, գլորեց զինքն ալ չան հետ 'ի Սէն գետ, ուր անտարակոյս կը կորստուէր եթէ չունը իրեն օգնութեան չհասնէր։ Բախտն այնպէս տնօրիներ էր որ խեղճ արարածը կարենայ ոտքերովը քակել պարանոցէն կախուած քարն և դառնալ անվնաս 'ի վերայ ջուրց. ուր տեսնելով իր տէրն 'ի վտանգ կորստեան, դիմեց լուալով առ նա անյիշաչարութեամբ, և մատուցանելով թաչամաղ թիկունքը, բերաւ մինչև ցգետափն 'ի զարմանս ամենայն տեսողաց. որ և վարձատրեցաւ իր բրած բարեգործութեանը համար. վասն զի հարուստ անձ մը որ գործոյն ականատես եղեր էր, գնեց այն չունն և միշտ տունը կը պահէր։

ԲՈՒՍԱԲԵՐՈՒԹԻՒՆ ԲԵԼԵՌԱՅԻՆ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ

Բելեռային երկիր ըսելով պէտք է իմանալ հիւսիսային բևեռէն մինչև իր ցրտային լրջանակին միջոցը, լայնութեան 66 ½ աստիճանէն մինչև յ' 90°, ուր տարին անընդհատ ինչուան 6 ամիս ցորեկ և 6 ամիս գիշեր կ'ըլլայ։ Այս 23 ½ աստիճան միջոցը կամ գոտին՝ կը պարունակէ իր մէջ Եւրոպիոյ, Ասիոյ և Ամերիկոյ հիւսիսագոյն ցամաքները. առջինին մասն է Լաբոնիա և Սամոյեաք. երկրորդին՝ Սիպերիա, յՈւրալ լերանց մինչև 'ի Պերինկի նեղուցը. երրորդին՝ Կրէնլանտիա և Պաֆինի ծոցէն մինչև 'ի բևեռային ծովն եղած կղզիք։ Եթէ երկիրս ուրիշ կողմերուն հետ բաղդատենք՝ հարկ է այս գոտւոյս բուսաբերութիւնն Իտալիան կամ Լեհային անուանել. միայն թէ ուրիշ տեղ պլեան բոյսք շատ մեծ բարձրութեանց վրայ կ'ըլլան, իսկ հոս ամենէն ցած տեղեր ալ. այս տեղի դաշտերն իսկ սառնապատ անապատներ են, և բոյսերնին հարկ է որ հազարաւոր մեդրաչափ բարձր լերանց բուսոց նման ըլլան. միայն թէ ամեն տեղ ալ այնպէս ընդարձակ ձիւնապատ դաշտեր չեն երևիր։ Ամենէն ամայի և ահաւոր կերպարանք կ'ընծայեն կղզիական կողմանք, ինչպէս Պաֆինի (որ և Հուտսոնի) ծոցոյ, ժայռերով և կիրճերով կտրատուած, որոց մէջէն Սառուցեալ ծովուն երեսէն դուրս կը ցցուի Մելվիլ կղզին ամփիթեատրոնի ձևով, 74-77° լայնութեան տակ. սրաձև կատարներով և բարձր բլրոց շարքով մը, որոց մէջէն կը բարձրանան ինչուան 2-3000՝ գագաթունք։ Ասոր նման են ուրիշ կղզիք ալ, և ամենէն ահաւորն է Կրէնլանտիա, որոյ սառնաձոյլ գագաթունքն ինչուան 5000՝ բարձր են։

Այս գօտւոյն տակ ամառ ատեն փոքրանակ գետոց՝ սառնահոլով հեղեղներ կը թաւալին խորաձորոց մէջ, և ծաներ ծաներ կը հասնին 'ի Սառուցեալ ծով։ Պաֆինի ծոցէն լեռնաճասակ սառոյցներ կու գան 'ի հիւսիսոյ, կը զարնուին Կրէնլանտիոյ ափանց, և կոտրտուած կ'երթան ծոցոյն նուազ պաղ հոսանքներովն՝ աւելի հարաւային կողմեր, որով կ'ազատի բևեռային գօտին բոլորովին սառելէն. կը կարծուի թէ տաքուկ հոսանք մը ծովուն խորէն կ'երթայ մինչև 'ի բևեռ, և հոն վեր ելնելով բևեռին սահմանները լոյծ ծով մը կը պահէ, մթնոլորտը կը մեղմացընէ, որով բոյսք և կենդանիք ալ կրնան ապրիլ։ Այս յուսով է որ այնչափ ջանքով կը դիմեն յանդգնաբար նաւոդք դէպ 'ի բևեռ, անոր գաղտնիքն իմանալու։ Այսով յայտնի կ'ըլլայ որ միայն աշխարհագրական լայնութեան դիրքն չեն պատճառ ցրտութեան. վասն զի մինչ Կրէնլանտիա 60-73° աստիճանաց տակ այսպէս սառնասառոյց է, նոյն աստիճանաց շատ աւելի բարեխառն և բուսաբեր են Նորուեկիա, Շուետ և Ֆինլանտիա. որովհետև Նորուեկիոյ եզերքէն կ'անցնի

digitised by A.R.A.R.@